

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԳՈՒՏ ՆՈՐԱՆ.

(Ժ. Ի--ԷՆ ՏՆԱԳՐԻ.)

ԳՆԻՄԱՆՈՐ ԱՂԷՒՆՔ ԿԱՊԱՆՈՒՄԻՆ.

Ա--ՆԻՐ--ԻՒՆ.

Անցք և դէպք յառաջ գան և անդէն սահնակ
անհետանան իրրեւ զհետս նաւուց յերեսս հու-
տակաց փրփրադէզ արեաց ջուրց, անցք նշանա-
ւորք և հիասքանչք յոլովագոյնք դիպան յաշ-
խարհի, այլ փոյթ յանհետ մոռացօնս զորեցան,
փասն զի չէր որ տակաւին որ ոչ ի նոցուն դար-
ձուցանէր յանկորուստ պահպանութեանն հո-
գածութիւն. ի բազմացն սակաւուց ոմանց և
եթ պահեցան յիշատակք ի միտս սակաւամիտ
անձանց, որք ի հօրէն որդւոց և ի հաւէ թոռանց
կրկնեալ և աւանդեալ ընդ սերնդեանն անմա-
հօթեան յարատեւեցին և զգոյութիւն իւրեանց,
որով և զերծան ի հանրածախ ժանեաց դիւրա-
մեռ ժամանակի՝ և այս է « Ժողովրդական աւան-
դութիւն », կոչեցեալն առաջին աղբիւր պատմու-
թեան, այլ կարի կտակածաւոր. փասն զի իւրա-
քանչիւր աւանդապահ ընդ պատմէն յաւելոյր
բանս ինչ ի նոյն կամ յապաւէր կամ յերկրէր
զգրոյցն ըստ քմացն ասորթիւ. և սորին աղագաւ
է ապարհն, զի իսկութիւն պատմութեանն ամե-
նահին ժամանակաց կամ իսողառ ըստնալ է ի
միջոյ, և կամ ստուգութեամբք և քմահաճ աւե-
լորդութեամբք խոնեալ և խճողեալ. փասն որոյ
գործ դժուարին է պատմագրին որոշել զստոյցն
յանստոյգէն. ընդ որ միտ եղեալ անսանձք, զի
եղողին ի խոյղ և ի խնդիր հնախօս պատմու-
թեան ճիշտ սպասէ տարժանաւոր ի հնակել ըզ-
կորդ երկիր ընդարձակ.

Երէք.

Բանաստեղծք զանցս առաջնոց դարուց յերգս
առնուին, և երգք նոցա անցեալ առ յետագայս
արծարծեցաւ յաճախ ի ժամ պարուց, տօնից,

և կրօնական հանդիսից. այս է երկրորդ աղբիւր
պատմութեան, այլ նմանօրինակ կտակածաւոր.
ըստ որում որպէս աւանդութիւնք, նոյն և երգք
ընդանդ ի բերան ածանցեալ յեղ յեղեալ, էր զի
փոփոխէին կամ կրճատէին, և էր զի յաւելութիւն
և զարդարէին. միւս ևս, զի յանկանելն իւրա-
քանչիւր լեզուաց ընդ փոփոխութեամբ, բառք
լմաստս առին և ետուն, որով և երգոցն պար-
զութիւն փոխեցաւ ի խրթնութիւն.

Ձանալն յիշատակութեան.

Երրորդ աղբիւր հնախօս պատմութեան են
պէսպէս յիշատակարանք, զորօրինակ են պատե-
րեղմական դաշտք, գերեզմանք դիւշազանց, շի-
նուածք ազգի ազգի, յորոց կէսք տարեալ ժուժ-
կայօրէն ամենածախ ժամանակին հարուածոց
կանգնեցան կացին ցարդ անդրդուկի. իսկ կէսք
խոնարհեալ անկան առաջի զօթութեան նորա, և
լքան կործանեցան դոյզն նշխար պահեալ կամ
ոչ.

Ընդ յիշատակարանս են և ծառք բազմամեայք
ընդ որովք զօր շնչեցին նախնիք և նահապետք
տոհմի և սերնդեան ուրուք.

Բաց ի կանգուն կամ աւերակ շինուածոց որը-
գանց, աշտարակաց, քաղաքաց, ամրոցաց, պարս-
պաց եկեղեցեաց ևլն. միւս յիշատակեալքն զը-
րէթէ՝ աղբիւրք են անջրդիք, յորոց չիք յոյս
պատմագրին զովացուցանել զպատք հիասքը-
քութեանն՝ շինուածք են միայն՝ որք վկայն
զանդիղի կենդանութենէ, զմեծութենէ, զփառաց,
զյառաջագիմութենէ և զսխրագործութենէ ազ-
գաց և անձանց նոցին կանգնողաց ևս և զնպա-
տակ շինութեան. զվկայութիւն Հերոդոտեայ
զճարտարամտութենէ և զարհեստից Եգիպտաց-
ւոց ոչ որ թերեւս ի յեանոցս առնոյր ի ստու-
գութիւն, թէ ցարդ ահեղ բրգունք երկնամարձք
զճմարտէին զբանն. Ի յիշատակարանացս կար-
գի են և մետաղք և դրամք.

Տարեգիրք և պատմութեան.

Ընդ յերեան գալն Աստուածային չքնաղ ար-
հեստի—զիւտոյ տառից, երեւեցաւ և չորրորդ
աղբիւր պատմութեան, թէ և սա ևս ոչ զերծ ի

քմասորժ զարդարանաց և ի թերութեանց իցէ, այլ այսու ամենայնիւ հաւատարմագոյն քան զերեսին յիշատակեալն:

Թուի թէ հինքն զառաջինն զնոյն օրինակ գիրս ի կիր առնուին որպէս ի վերջին ժամանակս և՜ զիպացիք և Մեքսիկանցիք, այն է զնշանագիրս կամ խորհրդագիրս, Խորհրդագիր ասացեալքը են պէսպէս բազմաթիւ նշանք, նկարք, և պատկերք տեսանելի կամ ծանօթ իրացն, որով զգրացմունս և զմիտս արտայայտէին. որք և ի յարգի կացին դարաւոր ժամանակք, մինչև հուսկ ուլեմն հընարեցաւ զիր այժմու: Անդառնին իսկզբանն չէր որ զմտաւ ածէր գրէր զպատմութիւն. շատ համարեալ էր միայն հնոցն զգրի հարկանել զօրէնս, զծէսոս և զպաշտամունս կրօնին: Հուսկ ուրեմն զգաց մարդ զկարեւորութիւն գրութեանն արժանա՝ յիշատակ անցից իւրոյ ժամանակի: Զէ յայտ թէ ո՞ր զառաջինն հանդիսացաւ պատմագիր, այլ թուի թէ ի քրմականն դասակարգէ լեալ իցէ. ի միոյն օրինակ առեալ և այլ ոմն ջանս եղ ի գիր արձանացուցանել զպզգային և զժողովրդական աւանդութիւնս, զերգս, զյիշատակարանս և զդէպս զանազանս, ևս և թափանցել որչափ հնարաւորն էր ի վաղանցիկ հնութիւնս, աստի ծնունդ էառ

« Հին մասնաւոր պատմութիւնն », ըստ որոյ իւրաքանչիւր նշանաւոր անցք կամ դէպ դարադուիս համարիւր. ըստ ամին օրինակի և ամենայն ազնիւք սկիզբն արարին զրել զազգային պատմութիւն իւրեանց:

Հաւանական է թէ և յառաջ քան զջրհեղեղն կեցելոցն յերկրի ծանօթ իցէ գիր, այլ թէ լեալ է պատմութիւն՝ անգիտանալք. ըստ որում ոչ մի յիշատակարան եհաս մեզ յետնոցս ի ժամանակէ անտի. իսկ որ ի ջրհեղեղէն ցՄովսէս, ամենազոյզն և հարեանցի ծանօթութիւնք են միայն, յանցանքն ի համայնալինը հեղեղէն ամաց 1700, երեւցաւ առ Երրայեցիս Մովսէս 1500 ամօք յառաջ քան զծնունդն Յիսուսի. որ ըստ Աստուածային կամայն հաճութեան յայտնեաց մեզ զպաղտնին արարչագործութեան և ճառեաց զնախնդակ վիճակէ մարդկայնոյն սեռի. Մարգարէս այս և Աստուածդրոյնի օրինագիրս եկաց և պատմիչ Երրայական տոհմի, ըստ օրինակի որոյ

և յետ նորա եկեալ մարգարէք և թագաւորք ջան ի գործ եղին անմահացուցանել զրովք ըլպատմութիւն ազգի իւրեանց, Ասան որոյ և միայն ազգիս այսմիկ մնաց պարծիլ և խնդամտել յիւրն հնազոյն պատմութեան հաւատարմութիւն, ի ժամանակս անցեալս յետ Նախամարգարէին ցՍիւրոս երևի առ Փիւնիկեցիս և Բարեկացիս թանգարան, և առ Նդիպտացիս ճոխ մատենադարան, սակայն և այս և այն անյայտացան ի միոյ. իսկ որ առ մեզ հասեալ հատուածք բանիցն են Սոնքոնիադէսի, շաղակրատեն միայն անպէտ զառանցանս և երեակայական ցնորս Փիւնիկեցոյդ աղորիկ զտեղծմանէ աշխարհի: ԶՀնդկացն ժամանակիս դիտեմք և ոչ ինչ. զՉինաց՝ կարի դոյզըն ինչ. իսկ զՅունաց բնակաց փոքուն Ասիոյ հարեանցի տեղեկութիւն յերգոցն Հոմերոսի. յետ որոյ ժամանակս ձիգս չերևի որ բնաւ առ Յոյս բանաստեղծ, տարեկիր և պատմագիր, որով և պատմութիւն հնադարեան ազանց մինչև ցՍիւրոս, ի բաց հանեալ միայն զԵրրայեցեոցն, այնչափ համառօտ և հարեանցի ինչ է, մինչ զի մարթ է ի մի մատեան միջակաղիր ամիոտիկ զամենայն. թէ և յարարչագործութեանն մինչև ցՍիւրոս անցեալ են ի վերայ ամբ 5000, մինչև հուսկ յետոյ երեւցաւ առ Հելլենս մեծահամբան և հայրենասէրն Հերոդոտոս, որ զառաջինն սկիզբն արար գրելոյ զպատմութիւն ազգի իւրոյ և օտարաց կիրթ ճաշակաւ և հանճարով. որով արգարապէս « Հայր », պատմութեան անուանեցաւ. օրինակի նոյնն զհետ կրթեցան և այլք, բայց 300 ամօք յետ Քրիստոսի կացեալ Յոյն և Լատին պատմիչք թէ և հաւատարմիք են ի բանս, այլ տկարախօսք և անճաշակք:

ՅԱռիա սկիզբն արարին զրել զպատմութիւն Քրիստոնեայ Ասորիք. իսկ առ Հայս առաջին պատմագիր հանդիսացաւ Մովսէսն ի Խորնոյ Ի միջին դարս յարեւելս Յոյնք (Բիւզանդացիք) ի ձեռս առին զգրիչ պատմութեան, որով և նախաձ արկին ի սիրտ տիրապետողաց իւրեանց Եւրաքացոց ի նոյն բերելոյ ջան. առ որս և երեւցաւ ի վերջոյ (ի սկզբան ժԳ դարու յետ Ծ.Ք.) Էմիր — Աբուլֆետայ պատմագիրս. Յարեմուտս Եւրոպիոյ պատմութիւն էանց ի ձեռս եկեղեցա-

կանաց և լեզու որոշեաց ինքեան զԼատիներէնն. յԹ զարու յայտնեցաւ պատմութիւնն և ի Հիւսիսայինն Եւրոպայ. ըստ որում ընդ Քրիստոսականն Կրօնի մուտ առ նոսա և գրութեան արհեստ. առաջին նշոյլ պատմութեան Հին Ռուսիոյ ծագեցաւ ի Քիեւէ, ի միայնարանէն մենակեցին Նեստորի ի նորուն Հայրենի բարբառ. թէպէտ և յետ այսորիկ միշտ ի յարդի գտաւ և խնամատարեալ եղև պատմագրութիւնն և տարեգրութիւնն, այլ պատմագիրք և տարեգիրք ի մենաստանս և ի վանորայս փակեալք պահալք, ոչ ամենեցուն ի ձեռս անկանէին, ուստի և սակաւուց ոմանց միայն յայտնիք, մինչև ցգիւտ տպագրութեան, յորմէ Հետէ ի հրապարակ ելին յաճախակի:

Զյարգ պատմութեանն լաւագոյն գիտաց միայն Եւրոպայ, որ և այժմ ջանիք մեծաւ զհետ լինի քննարանական և փիլիսոփայական ղիտողութեամբք յղկել և աղնուացուցանել զարուեստ նորին:

Թարգմանեաց Երեսպակէս Ժարդասպետ
Սեդրակեան.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

ԲՆՈՒԹԱՆՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ.

Ա.

ԶԵՐՄՈՒԹԻՒՆ.

Հասարակութեան հեղուի, և հազարէրոյ ծարմիներ:

Եթէ կամենանք մի քար կոտրելով քանի մի մասն անել, պէտք է զարկենք այդ քարին կռանով կամ մի ուրիշ բանով, եթէ ոչ՝ քարը չի կոտրուիլ: Սորանից երևում է, որ քարի մասները պինդ կցուած են միմեանց հետ մի անշարժ զօրութիւնով: Ե.յդ զօրութիւնը, որ քարի մասները պահպանում է իրարմէ հեռանալուց, ասվում է կցում: Ե.յս

զօրութիւնը տեսնում ենք և ուրիշ շատ մարմինների մէջ, օրինակ՝ երկաթի, սպունդի, շորեղէնի և այլ բաների, բայց ոչ հաւասարապէս ամենի մէջ: Ե.յսպէս, երկաթը չի կոտրուում կռանի զարկով, իսկ սպունդը և շորեղէնը կարելի է մատներով էլ մաս մաս անել: Բայց այսու ամենայնիւ բոլոր այդ մարմինները իրանք իրանց չեն քայքայվում, դոցա մասները մնում են միմեանց հետ կցուած: Ե.յս տեսակ մարմինները, որոնց մասերը իրար պինդ կպած են կեցման զօրութեամբ, ասվում են հասարակութեամբ կամ պինդ մարմիններ: Ինչքան շատ լինի մի որ և իցէ մարմնի մէջ այդ կցումը, նա այնքան խիտ կլինի և ամուր:

Բայց արդեօք ջուրը և կաթն էլ կարող են հաստատուն մարմիններ անուանուիլ: Եթէ ջուրը բաժակի մէջ ածխը, նորա մասները չեն հեռանալ միմեանցից, և հաստատուն մարմնի պէս կերելի մեղ, բայց եթէ բաժակը կոտրուի կամ գլորուի, ջուրը կըսկսի թափուիլ: Ե.յս նորանից է յառաջանում, որ ջրի մասների մէջ համարեա թէ չկայ կցում: Ե.յդ պատճառով երբ որ կամենում ենք ջուրը և կաթը պահպանել թափուելուց, լցնում ենք ամանների մէջ: Ուրեմն ջուրը և կաթը հաստատուն մարմիններ չեն: Ե.յս տեսակ մարմինները, որոց մէջ կցումը այսքան աննշան է, ասվում են հեղուի մարմիններ կամ հեղանիւ: Զուրը՝ կաթը և ուրիշ հեղուկները կարելի է լցնել կամ թափել կաթիլներով, և այդ պատճառով դորանց անուանում են հալիւ հեղուի կամ Զուրի մարմիններ: